ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «23» սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի սետեմբերի 02-23-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121** ծածկագրով (քսայուղի ձեռքբերում) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն.
Ս. Չիդեմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետ.
Տ. Ղևոնդյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ջ և ՀՄԱ-ի պետ.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արկադի Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121** ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ/՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121** ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած Ստանդարդ Գրուպ ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում կան որոշակի անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «ՍՏԱՆԴԱՐԴ ԳՐՈՒՊ» -ի կողմից ներկայացված հավելված 3.1-ում չափաբաժին 2-ի ապրանքի տեխնիկական պարամետրերը չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով սահմանված տեխնիկական չափանիշներին, մասնավորապես՝ կաթիլի անկման ջերմաստիճանը մասնակցի կողմից նշվել է 200°C, սակայն տեխնիկական բնութագրում նշված է՝ 190 °C:
- Ինչպես նաև կինեմատիկ մածուցիկությունը 40 °C-ի դեպքում 160 չի համապատասխանում քսայուղ արտադրողի պաշտոնական կայքում

ներկայացված տեխնիկական բնութագրին՝ (կինեմատիկ մածուցիկությունը 40 °C- ի դեպքում 150):

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն: Նիստը կասեցնել երեք աշխատանքային օրով:

2. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել «ՍՏԱՆԴԱՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- «ՍՏԱՆԴԱՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և լրացրել բացակայող փաստաթղթերը:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. Հաստատել ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) «ՍՏԱՆԴԱՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ՝ բավարար.

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/121** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Ստանդարդ Գրուպ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Չիդեմյան _____

Տ. Ղևոնդյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____